Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի N2759- N2800 որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N2759-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին։

2. N2786-Ա որոշման նախաբանի 1-ին պարբերությունում «որոշման» բառից հետո անհրաժեշտ է գրառել «այսուհետ՝ Որոշում» բառերը։

3. N2763-Ա, N2764-Ա, N2776-Ա, N2779-Ա, N2780-Ա, N2781-Ա, N2782-Ա, N2784-Ա որոշումների նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին։

4. N2783-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» /2021 թվականի դեկտեմբերի 24, ՀՕ-397-Ն/ ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասին։

5. N2782-Ա որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված։ Որոշման վերջին 5-րդ կետը չի համապատասխանում որոշման վերնագրին, նախաբանում կատարված հղումներին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթին։

6. N2775-Ա որոշման 5-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին։

7. N2773-Ա, N2774-Ա, N2794-Ա որոշումների վերնագրերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, բացի այդ որոշումներով տրամադրված հասցեներում չի պահպանվել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված վավերապայմանները։

8. N2761-Ա, N2768-Ա, N2769-Ա, N2770-Ա, N2771-Ա որոշումների նախաբաններում հղումը ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N 692-Ն որոշման դրույթին սխալ է գրառված, բացի այդ որոշումներում չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանները։

9. N2762-Ա որոշման վերնագրում և բովանդակությունում ինքնակամ կառույցի ներքին մակերեսը տարբեր է գրառված։

10. N2799-Ա որոշման նախաբանում հղումը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմանը՝ թերի է գրառված, բացի այդ որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթին։

11. N2796-Ա որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթին։

12. Առկա են որոշումներ, որոնց վերնագրերում և դրույթներում կատարվել են բառերի կրճատումներ, բացի այդ որոշումներում համայնքի անվանումը թերի է գրառված։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ